

## ՀԱՆԴԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ

### ՀՌԶԱԿ Ս. ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐԶԻ

Որչափ ալ մեծ է յազգիս Հայոց մեր անմահանուն և առաքելանման Լուսաւորչի պատիւն և պաշտօնն, թուի թէ դեռ բաւական չեմք գիտեր որչափ մեծագոյն ըլլալն իր համբաւոյն՝ ի հին դարս եկեղեցւոյ. կամ որքան մեծահրուշակ ըլլալն իր կենօք և մահուամբ ալ՝ ոչ միայն ի Հայս, այլ գրեթէ յամենայն եկեղեցիս ժամանակին: Որովհետև իր տօնն նշանակուած է ամեն հին եկեղեցեաց տօնացուցից մէջ ալ. որպիսիք են՝ Յունաց, Լատինաց, Ասորոց, Աղեքսանդրիոյ, Ղիտեաց, Մարոնեաց և ինչուան Եթովպացւոց ալ, որք ի 16 սեպտեմբերի տօնեն, իսկ այլք հասարակօրէն յ'30 սեպտ. Ղրիտիք նաև յ'3 հոկտեմբ. Յոյնք բաց ի մեծ տօնէն յ'30 սեպտեմբ., յունիս ամսեան մէջ ալ տօն մը հաստատեր էին ի յիշատակ բերման նշխարաց Լուսաւորչին ի Կ.Պօլիս: — Իսկ իր բնիկ ժողովուրդն Հայք՝ թէ և հիմայ երեք անգամ տօնեն ի տարւոյ, զՄուտն ի վիրապն, զԵլն ի վիրապէն և զԳիւտն նշխարացն, այլ գոնէ ութ անգամ յիշատակ նշանակուած է ի պատմութեան, և յայտ է թէ աւելի ալ կը յիշուէր երբեմն, այսինքն, Յղութիւնն՝ ի նոյեմբ. 21, Ծնունդն՝ յօգոստ. 17, Չարչարանքն՝ ի փետր. 16, Մուտն ի վիրապն՝ մարտի 10, Ելն ի վիրապէն՝ հոկտեմբ. 31, Տեսիլն՝ նոյեմբ. 12, Հանգիստն՝ սեպտ. 30, և Առաջին գիւտն նշխարացն ի Գառնրկայ՝ ի նոյեմբ. 18: « Եւ թէ և յամենայն աւուր տօնէաք, կ'աւելցընէ հին յիշատակող մը, պարտական եմք, և արժանի է սուրբ հայրն և յետ ֆրիստոսի երախտաւորն մեր. վասն որոյ և յամենայն աւուր շարական երգեսցուք »:

Գլխաւոր տօնին օրը, այսինքն մահուան կամ հանգրստեանը յ'30 սեպտ. կ'աւանդուի թէ Ս. Յովհանն Ոսկիբերան իր պքսորանաց ատեն ի կոկիւսոն Հայոց՝ աստուածային յայտնութեամբ իմացաւ և իմացուց. գոնէ աւելի ստոյգ և պանծալի աւանդ թողուց մեզի իր պերճախօս ներբողն ի պատիւ Լուսաւորչին. որոյ հետևող թուի ուրիշ յոյն մ'ալ որ կոչէ զնա ի ներբողին, « Լուսաւորիչ Հայաստանեայց, և հիմն հաստատութեան Հոռոմոց »: Այս արևելեան մեծ եկեղեցին՝ յորմէ մեր Հայոց եկեղեցւոյ հարք ալ առեր են զմեծ մասն ծիսից և աղօթից, մերիններէն առաջ ի պատիւ Լուսաւորչին երգեր և շարականներ նուիրած է, որք ինչուան հիմայ գտուին ոչ միայն յունարէն, այլ և լատինարէն թարգմանեալ, թերևս հազար տարի առաջ. ահա ասոնցմէ մէկ քանին կը հրատարակեմք թարգմանութեամբ Գերապ. Արքեպիսկոպոսի Տ. Եղուարդայ Հիւրմիւզեան ծանօթ և յաջող գրչաւ: Լատինաց եկեղեցին ալ որոշեալ կանոն, այսինքն աղօթքներ և երգեր սահմաներ է ի պատիւ Ս. Լուսաւորչին, որ մեծահանդէս կը տօնուի ի Նաբոլի, Նարտոյ, Բալերմոյ, և Հռովմայ ու երկու Սիկիլեայց քանի մ'ուրիշ քաղաքներ. բայց համեմատութեամբ նոր գրուած ըլլալով յունականաց վսեմութիւնն և քերդողական ոգին չունին. թէ և այս ոգին աղօթից և պաշտամանց էական յատկութիւն չեմք համարիր:

Ծանօթ է բանասիրաց՝ որ Լատինաց կամ իտալացւոց մեր Լուսաւորիչը մեծահանդէս տօնելնուն պատճառն է, մեր Սրբոյն նշխարաց և շարչարանաց գործեաց մէկ մասին բերուիլն ի Նաբոլի և ի Նարտոյ քաղաք՝ այն գեղեցիկ Պարթենոպեան երկրին, ի ձեռն

Բարսեղեանն հուսանաց Յունաց, թերևս  
 և Հայոց. որք կ'ըսուի թէ Բիւզանդեան  
 պատկերամարտ կայսերաց ատեն փա-  
 խան եկան այս կողմերս, այսպիսի պա-  
 տուական և սուրբ գանձերով. ժամա-  
 նակն և կերպն շատ յայտնի չէ, այլ  
 ը կամ թ դարու մէջ հանդիպած է. և  
 այն ատենէն եկեղեցիներ և խորաններ  
 նուիրուած են 'ի պատիւ Լուսաւորչին.  
 և իր վարքն ու վկայութիւնը փնտռուեր  
 է, և գտնելով յունարէն Ագաթան,  
 գեղոսը՝ թարգմաններ են լատինարէն  
 իբրև 'ի ԺԱ դարու. թարգմանողն ըն-  
 ծայեր է զայն առ Գայիանէ արքասուհի  
 կուսաստանին այն ժամանակի, որ գուցէ  
 և Հայ հաւատաւոր մ'ըլլայ. յետոյ ի-  
 տալերէն ալ թարգմաններ, և շատ հեղ-  
 շատ կերպով երկայն կամ կարճ վարքեր  
 դրած և տպագրած են ետքի չորս դա-  
 րուցս միջոց: Ժէ դարուն սկիզբները  
 Լուսաւորչի գանկը նորէն ստանալով  
 կուսանքն (որովհետև ատենէ մը վեր  
 ուրիշ կրօնաւորաց վանք մը փոխա-  
 դրուեր էր), շատ մեծ հանդէս մը կա-  
 տարեցին. ասով աւելի տարածեցաւ  
 Սրբոյն պաշտօնը. մինչև յամի 1636  
 քաղաքականօրէն ալ սահմանեց Նաբո-  
 լիի տէրութիւնն՝ որ Ս. Գր. Լուսաւորիչ  
 համարուի մասնաւոր պաշտպան նախ  
 բոլոր տէրութեան, և երկրորդ իր մայ-  
 րաքաղաքին. դար մը ետև Բալերմոյի  
 (Սիկիլիոյ) հասարակութիւնն ալ սահ-  
 մանեց զնոյն իրենց քաղաքին Պաշտ-  
 պան: Յիշեալ դարերուս մէջ Հայ հա-  
 սարակութիւնն կամ գաղթականք ալ  
 գտուելով քանի մը իտալական քաղա-  
 քաց մէջ՝ իրենց Լուսաւորչի պատկերը  
 մտուցին զանազան եկեղեցեաց մէջ  
 և խորաններ ալ նուիրեցին. և գե-  
 ղեցիկ եկեղեցի մ'ալ 'ի Լիվոռնոյ 'ի  
 սկիզբն ԺԸ դարու: Լատին քարոզիչք  
 ալ ջանացան տարածելու մեր սրբոյն  
 պաշտօնը. որոցմէ մէկն ընդունելով 'ի  
 Նաբոլիէ մաս մը նշխարաց յամին 1696,  
 նախ 'ի Կ. Պօլիս մեծ հանդէս կատարել  
 տուաւ անով յեկեղեցիս, ապա յէր-  
 զիւում, յետոյ (1699) 'ի Նոր Զուղա  
 (Սպահանու), ուր և դրաւ 'ի վանս Յի-

տուսեանց: Այս յիշեալ կարգաւորք ին-  
 չուան 'ի Հնդկաստան ալ Մալապարի լե-  
 զուով ոգրերգութիւն գրեր էին վա-  
 րուց Ս. Լուսաւորչի և ձևացընել կու-  
 տային Հնդկաց. ինչպէս Թէադին կու-  
 չուած կարգաւորք ալ 'ի Հայս Լեհաց:  
 Բաւական համարելով 'ի ժամուս  
 այսչափս 'ի ծանօթութիւն համբաւոյ  
 Լուսաւորչին մերոյ՝ յեկեղեցիս, կար-  
 դանք նախայիշեալ Յունաց շարական-  
 ները:

Ա. ԾԱՆՈՒ ԶԱՅՆ.<sup>1</sup>

Որ զմոլորեալս 'ի խաւարի անգիտու-  
 թեան՝ որդիս լուսոյ աստուածային բանիւք  
 ծնաւ տէր սուրբ Գրիգոր, գերափայլ պսակ  
 եկեղեցւոյ, անմատոյց լուսոյն արուսեակ,  
 բարեխօս հաւատացելոց իւրև, զքրիս-  
 տոսանուէր հայրապետն այսօր երգով վե-  
 րապատուեսցուք:

Ո՛վ սուրբ վկայ Քրիստոսի, սքանչելա-  
 գործ տէր Գրիգոր, խստամբեր ճգնեալ, և  
 'ի փորձ տանջանաց՝ ծունր կրօնոց ոչ ածեր.  
 մարտակից կուսանացն սրբոց Գայիա-  
 նեայ և Հռիփսիմեայ. խրախոյս նոցին յաս-  
 պարիդի փառաւորեալ պատերազմին ան-  
 մահութեան, բարեխօս լեր ընդ նոսին վասն  
 փրկութեան անձանց մերոց:

Իմանալեալ բանին ուռկանաւ՝ պարպա-  
 տեալ զանազան որսովք, բիւրս բիւրուց  
 որսացար 'ի Քրիստոս. 'ի զրահեղեղ պաշ-  
 տամանց վերածեալ զնոսա 'ի հաւատոս. և  
 մկրտութեանն շնորհիւ զարուսեակն ան-  
 դրնդային զհոգեկուրն բելիար խորասու-  
 զեր 'ի դժոխս, ո՛վ տէր սուրբ Գրիգոր:

Որ ահաւոր հրաշիւք ցուցար կենդանի ու-  
 րոց արկին զքեզ 'ի վիհ վիրապին. որք 'ի  
 յօձից ծախեալ զքեզ համարէին՝ յապուշ  
 հարան. որ զարքայն մեծ զՏրրդատ՝ 'ի  
 տիպ գոռոզ բռնաւորին Բարելոնի 'ի մարդ-  
 կեղէն յիւր կերպարանսըն դարձուցեր,  
 բարեխօսելով առ Տէր, ո՛վ հրաշաղարդ  
 տէր սուրբ Գրիգոր:

Բ. ԶԱՅՆ Զ ԿԱՍ Բ ԿՈՂՄՆ.<sup>2</sup>

Խուժան տանջանաց ոչ զարհուրեցոյց  
 զմարմնոյդ բնութիւն. և ոչ բազմամեայ  
 'ի խաւարչուտ վիրապին արգելան, նահա-

<sup>1</sup> Յաւելու վերնագիրն. Նւ երգի որպէս (շա-  
 րականն) Այսօր հոյէ Յոգաս:  
<sup>2</sup> Երգի որպէս Աւհամարհելով զտանայն:

տակ արի տէր սուրբ Գրիգոր, խարխափե-  
լոց 'ի խաւարի ունայնութեան լոյս ծագե-  
ցեր կենարար և փրկաւէտ ճշմարտութեանն  
պատգամօք. վերածընեալ զնոսա 'ի ձեռն  
սուրբ մկրտութեան՝ որդիս լուսոյ և տու-  
ընջեան, աստուածային Հոգւով լցեալ, ա-  
մենիմաստ սուրբ Հայրապետ:

Քեզ, Տէր երկնի և երկրի, քեզ փեսա-  
յիդ անմահի տարփացեալ կոյսն Հռիփսի-  
մէ, և միացեալ ընդ քեզ Հոգւով ելիք 'ի  
բաց զմարմին. վաղ զկարիս նորին ընկճեալ  
ժուժկալութեամբ, վաղ զմարմին իւր նուա-  
ճեալ խարազնազգեաց ճգնութեամբ. և  
կոյսն սուրբ Գայիանէ որ երկնակրօն դստե-  
րօքն յաղթեաց հընոյ խարդախողին զնա-  
խամայրն. ընդ նոսին արժանաւոր օրհնու-  
թեամբ զքեզ Քրիստոս փառաւորեմք:

Գ. ՉԱՅՆ ԵԱՆՐ ԿԱՄ Է.

Երգեսցուք Տեառն՝ որ խորտակէ զպա-  
տերազմունս. և ընկրդմեաց զսպառազէնսն  
'ի ծով (Կարմիր): Պետքըն երրեակ, սո-  
վորք 'ի մի կառս վերելեակ, մին կառավար  
'ի կոծ սանձից, այլք մարտակիցք վանէին  
զթշնամիս:<sup>1</sup>

Տօնելով զյիշատակ քաջի հովուին՝ Հա-  
յաստանեայց Լուսաւորչին, որ դիմագրաւ  
'ի պատերազմ՝ զյաղթական կալաւ պը-  
սակ, երգեսցուք միայնոյ Փրկչին մերոյ, զի  
նա փառօք է փառաւորեալ:

Ասաց թըշնամին. Հարից զնա, սատա-  
կեցից, անդէն զոսոխն արկեալ տապաստ.  
այլ դու յամօթ զխորամանկ խորհուրդ-  
չարին արարեր, տէր սուրբ Գրիգոր:

Ո՛վ է որպէս զքեզ Աստուած, սուրբ  
նահատակդ գոչէիր. սքանչելի զօրութեամբ  
քով զհալածիչս հաւատոց՝ երկրրպագուս  
ճշմարտութեան յեղակարծում արարեր:

Վկայուհիդ Քրիստոսի՝ սուրբ Հռիփսի-  
մէ, հովուին որոջ անարատ. զգաստու-  
թեան քո յաղթանակ վայելչապէս պսակե-  
ցաւ. դու զխորամանկ ոսոխն՝ ընդ քորս  
քո՝ հարեր զԲելիար:

Որ զգոռողից յանդգնութիւն՝ անլուր  
յերկրի սքանչելեօք ընդ վայր հարեր, ո՛վ  
Տիրամայր կոյս, զերծո 'ի հզօրաց բռնու-  
թենէ, զերծո 'ի հզօրաց բռնութենէ՝ զհօտ  
քո, որ զքեզ մեծացուցանէ:

<sup>1</sup> Թուի նկարագրել զձև պատերազմիկ կա-  
ւաց նախնեաց. յորս արդարև յաճախ երևին  
երէք վերելեակք, մին կառավարելով, և երկօքին  
զննաձիգ լինելով:

Դ.

Նայեցարուք երկինք, և խօսեցայց զըս-  
քանչելիսն Աստուծոյ. օրհնեցից զանեղա-  
կանին ծնունդ 'ի Կուսէն:

Լուր աղօթից սրբոյ Հայրապետին, և ա-  
ռաքեա 'ի բարձանց զողորմութիւն քո բա-  
զումողորմ, Տէր, փրկեա զիս:

Մերկացեալ զհողեղէն բնութեան զգեստ,  
և զփառս անմահութեան զգեցար, վկայդ  
Քրիստոսի:

Խորամանկ թշնամին, որ յաղթող ընդ-  
դէմ տկար բնութեան՝ պարտեաց զնախա-  
մայրն, ընդ ոտիք հզօր կուսից անկեալ  
կործանեցաւ:

Հարսնացեալք Քրիստոսի, վկայք նորին՝  
հանդիսացեալք պսակեցան 'ի նմանէ երկ-  
նային պսակօք:

Տեսանօղաց լցան 'ի քեզ բանք, Տիրա-  
մայր, քանզի Բանն անսկիզբն 'ի Հօրէ՝ 'ի  
քէն մարմնացաւ:

Ե.<sup>1</sup>

Գեր 'ի վերոյ մահու կացեալ, 'ի կեանս  
անմահ վերափոխեալ, ո՛վ սուրբ վկայդ  
Քրիստոսի, զի զհոգիս մարդկան չարչա-  
րանօք քովք ածեր յաստուածգիտութիւն:

Բաղմապատիկ և զանազան տանջանօք  
լուսապայծառ և երկնային պսակս 'ի գլուխ  
քո բոլորեցեր, զի 'ի ստուերաց մահու զհո-  
գիս ածեր 'ի լոյս կենացն 'ի Քրիստոս:

Բարձեր զկռոց պաշտամունս, զաստուած-  
պաշտութիւն հաստատեցեր, և զխոր-  
հուրդս ճշմարիտ հաւատոց ցուցեր բնաւից,  
հովիւ հոգևոր:

Որոջք Քրիստոսի անարատք դատապար-  
տեալք որպէս մեղապարտս, բազմաչարչար  
և չարատանջ, վասն Քրիստոսի 'ի մահ  
մատնեցան:

Աստուածածին կոյս Մարիամ, անհարս-  
նացեալ մայր, դու միայն մայր և կոյս. զի  
'ի քէն ծնաւ աստուածորդին Քրիստոս,  
ո՛վ հարսնացեալդ Աստուծոյ, կոյս և մայր  
ողջախոհութեան:

Զ. ՉԱՅՆ Գ.

Ախոյեան հաւատոյ անպարտելի, յաղ-  
թող 'ի մարտի, հաստատուն 'ի հալածանս,  
քննեալ և փորձեալ որպէս զերկաթ 'ի հուր,  
մարտեար որպէս զքաջ նահատակ, դա-

<sup>1</sup> Երգի որպէս Ձեզինն Բանիս հասարակեցեր:

նակոծեալ արիարար, և զղիւսապաշտ դա-  
հիճս քո՝ աստուածապաշտս արարեր, ո՛վ  
սուրբ Քրիզոր, որ ունիս համարձակու-  
թիւն առ Տէր, խնդրեա ՚ի նմանէ վասն մեր  
չնորհել զխաղաղութիւն և զմեծ ողորմու-  
թիւն:

Է.<sup>1</sup>

Բացան երկինք ՚ի ձայն սրբոյ վկային, և  
ոյս ծագեաց ՚ի Հայաստան՝ զհալածիչս  
Քրիստոսի երկըրպագուս անուան նորա  
յարգարեաց սուրբն Քրիզոր:

Հեղմամբ արեան՝ քան զհաւատոցն Քրիս-  
տոսի ՚ի սիրտնոցին տալաւորեաց զչնորհս:

Զթագաւորն հալածիչ Քրիստոսի՝ ՚ի  
մարդկային կերպարանաց վայրենացեալ՝ ՚ի  
յապշութիւն արքունեաց, ՚ի նմանութիւն  
Քրիստոսի կերպարանեաց:

Աքանչելիք ՚ի քէն, վկայ Քրիստոսի, ոչ  
մարմնեղէն զօրութեամբ՝ այլ երկաթեալ  
ոմամբ ընդդէմ դահճաց քոց գործեցան:

Որպէս որոջք անդիմամարտք կտրրչաց՝  
ետուն զանձինս ՚ի մահ՝ հարսունք Քրիս-  
տոսի, վկայուհիք անարատք և հաստա-  
տունք ՚ի հաւատս:

Մորթեզերծ եղեն մարմինք զառանցն  
Քրիստոսի՝ զանիւք և սուսերօք ՚ի դահ-  
ճաց:

Յղութիւն անսերմնական, ծնունդ անա-  
րատ առանց երկանց, ամենայն ինչ ՚ի քեզ,  
Տիրամայր, սքանչելեօք հրաշագործեցան:

Ը.

Զարչարանս բազմազանս ՚ի դահճաց ըն-  
կալար՝ որպէս պսակս պարծանաց, սուրբ  
հայրապետ. կէտ ճշմարիտ քեզ հաստա-  
տեալ զպատրաստեալն ՚ի Քրիստոսէ ըզ-  
փառս, արփիակերպ ընդ սուրբս իւր հա-  
մածագել:

Սրբազնագոյն զսուրբ ուրարն յարին  
քոն երկեալ յօրինեցեր, խորհրդաբար ա-  
ծեալ զքե, ո՛վ սուրբ աստուածաբան. և  
որպէս միւս այլ առաքեալ հեթանոսաց՝  
զպակասութիւն չարչարանացն Քրիստոսի  
՚ի մարմնի քում կրեցեր:

Ի սեղան իմանալի զոհ զմարմին քո մա-  
տուցեր, զենող և զենեալ, ողջակէզ կեն-  
դանի. անհատահոս աստուածային բանիւք  
խորոցն Աստուծոյ խորհրդազգաց զհաւա-  
տացեալս առնելով:

Հօրացեալ ՚ի Յուդիթ բնութիւն տկար  
և կանացի՝ առնաձև երբեմն յայտնեալ,

1 Երգի որպէս Զգալասար քո, Քրիստոս:

ընդդիմամարտ անդնդայնոյն Հողոփեռնի՝  
երևի արդ ՚ի Հռիփսիմէ, հաւատովք զի-  
նեալ փոխանակ սուսերի:

Ի նախամայրն Եւաբնութիւն տկար ան-  
զօր ՚ի սկզբանէ, քրիստոսական կրօնիւք  
վառեալ զսիրտս կանանց՝ փափաքէ տալ  
փոխանակ նորա զկեանս, զարիւնախանձ  
զապառում թշնամին կորակոր ՚ի բաց՝ դար-  
ձուցեալ:

Ոչ որ է նման քեզ ՚ի կանայս, Տիրամայր.  
ոչ այլ որ մայր համայն և կոյս երևեալ.  
դու միայն կոյս և հարսն անփորձ զԱս-  
տուածորդին կերակրելով կաթնասուն:

Թ.

Խորասուղեալ յանդունդս մեղաց, առ  
քեզ Տէր, որպէս Յովնան ՚ի փորոյ կիտին  
աղաղակեմ, Տէր փրկեա զիս և կեցո:

Վառեալ սիրով մարդասիրին կոխեցեր  
առ ոտն զփառս աշխարհի, ո՛վ երանելի  
տէր սուրբ Քրիզոր, և հասեր ՚ի կեանս  
անմահ, ՚ի կեանս անծերանալի:

Ի տեսիլ դահճաց անասանելի արիու-  
թեամբ ժուժկալեալ, զտանջանս ՚ի նոցանէ  
անյաղթելի մարմնով կրեցեր, և մտաց  
քոց զօրութիւն եկաց աննրկուն:

Փոխանակ անդնդախոր օձուտ վիրապին՝  
պատրաստեալ քեզ աթոռ զերագահ ՚ի  
փառս արքայութեան ընդ դասս հրեշտա-  
կաց, տէր սուրբ Քրիզոր:

Որոջ ամբիժ, հարսն Քրիստոսի Հռիփսի-  
մէ. զբռնաւորն տարփացեալ, զհալածիչն  
կուսականդ սրբութեան՝ յամօթ արարեր:

Զանսկիզբն Աստուածորդին, զանմայրն  
յառաջնում, անհայր ՚ի յերկրի, զմարմնա-  
ցեալ Բանն Աստուած օրհնութեամբ բարե-  
բանեցուք:

Ժ.

Զհայրապետն մեծ, վկայ ճշմարտու-  
թեան, եկայք հաւատացեալք այսօր տօ-  
նեցուք, զսուրբ հովին Քրիզոր, Լուսա-  
ւորիչն հրաշագարդ, եկայք երգով օրհնե-  
ցուք, զի ընկալցի ՚ի Քրիստոսէ զփրկու-  
թիւն անձանց մերոց:

ԺԱ.

Զյաղթող նահատակն Լուսաւորիչ Հա-  
յաստանեայց, հովիւ հոգևոր, զախոյեանն  
հաւատոց զտէր Քրիզոր, հաւատացեալքս  
գովեսցուք. և երգօք հոգև որօք պսակե-  
ցուք զգլուխ նորա. որ զխաւար կռապաշ-  
տութեանն հալածեաց, զիշխանութիւն զի-

ւաց ելոյժ, և արժանի եղև ընդունել շնորհս աննկուն ճգամբքն, լինել բարեխօս 'ի վերջութիւն անձանց մերոց:

ԺԲ.

Բազմասպատիկ չարչարանաց քոց 'ի վարձ պսակ յերկնից ընկալար կրկին, զմին 'ի խաւարին և յաղտաղտուկ վիհն ընկեցեալ, և զերկրորդս իբրև զջահ պայծառ 'ի Քրիստոսէ եղեալ յաշտանակի, սիռեւ զոյս:

Զքեզ գովէ եկեղեցի Հայաստանեայց, զքեզ ունի որպէս միւս այլ հեթանոսաց առաքեալ, քև 'ի Քրիստոս մերձեցեալ, քրտամբ քոյով 'ի պաշտամանց կոոց զերծեալ:

Կանայք պատուականք երկոքին դիմագրաւեալ առնաբար, և քաջութեամբ հոգւոյ զճարմին արհամարհեալ, կացին ընդդէմ դիւապաշտ մոլորութեան, պսակեցան 'ի Քրիստոսէ:

Ողջոյն ընդ քեզ դուռն կենաց Մարիամ, յորմէ ծագեաց արեգակն արդարութեան Քրիստոս. ողջոյն ընդ քեզ, թագաւորին Քրիստոսի տաճար անձնաւոր. ողջ լեր ազրիւր կենաց, վտակ ոսկեղէն:

ԺԳ.

Քերազանցեալ 'ի հայրապետս, մեծարեալդ 'ի վկայս, պարծանք դասուցն երկաքանչիւր, որ արժանի եղեր առնուլ պըսակ կրկին 'ի Քրիստոսէ:

Պատմօղ խորոց աստուածայնոցն խորհրդոց, զորս համբերութեամբ բացեալ խելամուտ զհալածիչս արարեր, և ծանուցեր նոցա զՔրիստոս՝ զմարդացեալն վասն մեր:

Արժանաւոր կոչմամբ Արթուր Քրիզոստիէ անուանեցար, որ զընկղմեալս 'ի քուն մահու՝ քաղցրանուագ քնարաւ բանից քոց զարթուցեր յամպարչտութեանն թմբութենէ:

ԺԴ.

Ո՞ պանծասցի պատմել զծնունդ առանց երկանց. ո՞ զյղութիւն անսերմական. ո՞վ որ յերկրածնաց 'ի լուր սքանչելեացս ոչ հիասցի. վասն որոյ զքեզ, ո՞վ տիրամայր, ամենեքեան մեծացուցանեմք:

Զգանս և զտանջանս 'ի յանձն առեր իմաստութեամբ, ո՞վ զարմանալիդ Քրիզոս, և արժանի եղեր առնուլ 'ի Քրիստոսէ որ զօրացոյցն զքեզ՝ զերկնային անեղծ պսակ:

Քեզ, սուրբ վկայ, երաց Քրիստոս զարքայութիւն իւր՝ բնակել անդ 'ի լոյսն անմատոյց. բարեխօսեա նմա արդ վասն մեր տօնողացս զքո նահատակութիւնդ:

Որ ընդ գազանս 'ի վիրապին զամս բազումս 'ի խաւարի բնակեցար. արդ որպէս լոյս միջօրէի ծագես պայծառ 'ի Քրիստոս, լուսաւորել զհալածիչս նորին:

Տկար բնութեամբ վկայուհիք քո, տէր Յիսուս, եղեն ընդ քեզ չարչարակից. և առ 'ի սէր քո զուարճալիցք 'ի տանջանս ցնծային:

Քեզ վայելեն փառք յաւիտեանս յաւիտենից, ամենասուրբ Երրորդութիւն, որ զվկայս քո փրկեցեր, և փառօք պսակեցեր. աղօթիք նոցա շնորհեա զփրկութիւն անձանց մերոց:

ԺԵ.

Որ զմարմին քո վարդազոյն արեամբ ներկեալ, երևեցար փառաւորեալ 'ի վրկայս, և ընդ հրեշտակս արդ ցնծացեալ բերկրիս, ո՞վ սուրբ Քրիզոստիէ, լեր բարեխօս վասն մեր մեղաւորացս:

Յետ այսքան յունականաց լսենք երկու տուն ալ Եթովպացի չարականաց, որոց առաջինն է յելսն 'ի վիրապէն, 'ի 16 սեպտեմբերի՝ ըստ նոցա:

Ողջոյն Քրիզոստի, տեսառն և վկայի. որ 'ի ժամանակի առաջնորդութեան իւրում զարդարեաց զվկայարանս Կուսանացն միաբան նահատակելոց. իսկ այսօր յիշատակին ելք նորա 'ի վիրապէն. որպէս ազդեցաւն քեռ թագաւորին՝ 'ի տեսլեան գիշերոյ:

Երկրորդն՝ Թուի Մուտն 'ի վիրապն՝ 'ի 15 դեկտեմբերի:

Ողջոյն Քրիզոստի, որ համբերութեամբ տարաւ չարչարանաց, սառամանեաց գիշերոյ և տապոյ տունջեան՝ զհնգետասան ամս վիրապընկէցութեանն:

Ողջոյն և պառաւոյն՝ որ բարւոքն սպասաւորեաց, գաղտ արկանելով նմա կերակուր:

Թուի ուրեմն թէ Եթովպացիք միշտ ողջունելով կը սկսին յարդել զսուրբս: